ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 հունվարի 2025 թվականի N 01

ՄԱՐԻԱՄ ԽԱՉԱՏՈՒՐԻ ՊԱՐԱՆՅԱՆԻ ՀԵՏ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վանաձոր համայնքի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր կուսակցություն» խմբակցության 15 մարտի 2023 թվականի գրությունը, Վանաձոր համայնքի ավագանու 14 դեկտեմբերի 2022 թվականի թիվ 7 որոշումը, Մարիամ Խաչատուրի Պարանյանի դիմումը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 67-րդ հոդվածի 3-րդ մասով՝ ***որոշում եմ.***

1.Մարիամ Խաչատուրի Պարանյանին ընդունել աշխատանքի՝ որպես Վանաձոր համայնքի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր կուսակցություն» խմբակցության փորձագետ՝ 2025 թվականի հունվարի 3-ից մինչև դեկտեմբերի 31-ը:

2.Մարիամ Խաչատուրի Պարանյանի հետ կնքել ժամկետային աշխատանքային պայմանագիր:

3.Աշխատավարձը՝ համաձայն պաշտոնային դրույքաչափի:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. հունվարի 03
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 հունվարի 2025 թվականի N 02

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Վ. ՏԵՐՅԱՆ ՓՈՂՈՑ 4/4, Վ. ՏԵՐՅԱՆ ՓՈՂՈՑ 6-6/6 ԵՎ Վ. ՏԵՐՅԱՆ ՓՈՂՈՑ 4/1 ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՌԱՖԻԿ ՍԱՄՎԵԼԻ ԱՌԱՔԵԼՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԱԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՄԵԿ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ռաֆիկ Սամվելի Առաքելյանի 06.12.2024 թվականի թիվ 02/20697 դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 04112021-06-0078, 15072021-06-0036 և 30082021-06-0021 վկայականները, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, «Գասպար Վեքիլյան» ԱՁ-ի կողմից տրված հողամասի հատակագծերը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով,ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով՝ *որոշում եմ.*

1. Միավորել Վանաձոր համանքի Վանաձոր քաղաքի Վ. Տերյան փողոց 4/4, Վ. Տերյան փողոց 6-6/6 և Վ. Տերյան փողոց 4/1 հասցեներում գտնվող Ռաֆիկ Սամվելի Առաքելյանին սեփականության իրավունքով պատկանող 0.011835 հա ընդհանուր մակերեսով հողամասերը և դրա վրա գտնվող 5.46քմ մառանը՝ համաձայն «Գասպար Վեքիլյան» ԱՁ-ի կողմից տրված հատակագծի:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաք, Վ. Տերյան փողոց 4/4 մառան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. հունվարի 07
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 հունվարի 2025 թվականի N 03

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 16Ա ՇԵՆՔԻ ՀԱՐԱՎԱՅԻՆ ՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԻ, ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ԱՎՏՈՏՆԱԿԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վաչագան Վռամի Հովսեփյանի 15.02.2023թ. թիվ 02/22382 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, Գասպար Վեքիլյան Արշակի ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, 19.07.2024թ. «ՌԻԳ» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ 105գ-18830 եզրակացությունը, ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 14.12.2023թ. տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 2023FZDFXF), 13.05.2024 թվականի Վանաձորի համայնքի ավագանու թիվ 31 որոշումը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել Վանաձոր համայնքի սեփականության իրավունքը Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Ուսանողական փողոցի, թիվ 16ա շենքի հարավային մասում ինքնակամ կառուցված, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանող 21.86քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 18.68քմ) ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 19.2քմ մակերեսով հողամասի նկատմամբ՝ համաձայն հատակագծի:

2.Ճանաչել օրինական սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի գործառնական նշանակությամբ ինքնակամ կառույցը:
3.Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, հաշվառման և գովազդի բաժնին՝ 5-օրյա ժամկետում դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում՝ սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ կառուցված

ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:
4.Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ-գլխավոր ճարտարապետ Ս. Աբովյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկել սույն որոշման 1-ին կետում նշված շինության ինքնակամ կառուցումը իրականացրած անձին ավտոտնակը և հողամասը ուղղակի վաճառքի ձևով օտարելու վերաբերյալ:
5. Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի, Ուսանողական փողոցի, թիվ 16ա շենքի հարավային մասում գտնվող ավտոտնակին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաք, Ուսանողական փողոց , 16/1 ավտոտնակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. հունվարի 07
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 հունվարի 2025 թվականի N 04

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Գ. ՍՈՒՆԴՈՒԿՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 60/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՍՎԵՏԼԱՆԱ ՍՈՒՐԵՆԻ ԽԱՌԱՏՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԵՐԿՈՒ ԱՌԱՆՁԻՆ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐ ՏԱՐԱՆՋԱՏԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սվետլանա Սուրենի Խառատյանի 01.10.2024 թվականի թիվ 02/16534 դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 31072024-06-0034 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, «ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿ» ԱՁ-ի կողմից տրված հողամասի, շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով՝ **որոշում եմ.**

1.Տարանջատել Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաք Գ. Սունդուկյան փողոց 60/1 հասցեում գտնվող, Սվետլանա Սուրենի Խառատյանի սեփականության իրավունքով պատկանող հողամասը և դրա վրա գտնվող շինությունները՝ համաձայն «ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿ» ԱՁ-ի կողմից տրված թիվ 1 և թիվ 2 հատակագծերի:

2.Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Գ. Սունդուկյան փողոց 60/1 հասցեում գտնվող տարանջատված գույքին տրամադրել փոստային հասցեներ.

ա. 0.035795:2 հա մակերեսով հողամասին և նրա վրա գտնվող 125.30 քմ մակերեսով բնակելի նշանակության շինություններին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Գ. Սունդուկյան փողոց 60/1 բնակելի տուն:

բ. 0.035795:2 հա մակերեսով հողամասին և նրա վրա գտնվող 269.26 քմ մակերեսով բնակելի նշանակության շինություններին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Գ. Սունդուկյան փողոց 60/2 բնակելի տուն::

3.Հողամասի հատակագիծը տրված է հասցի սահմանելու նպատակով: 0.035795 հա հողամասը գտնվում է ընդհանուր օգտագործման տակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. հունվարի 07
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 հունվարի 2025 թվականի N 05

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 12 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 2130 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Մամիկոն Կարենի Պրուտյանի 14.08.2024 թվականի թիվ 02/13928 դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների դրանց դադարեցման պետական գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթի մուտքագրման քաղվածք թիվ 1879520, 04.04.2007 թվականի թիվ 238 հողատարածքի վարձակալության պայմանագիրը, Վանաձորի համայնքի ղեկավարի 17 հուլիսի 2008 թվականի թիվ 996 որոշումը, 01.04.2017թ. ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 702 վկայագիրը (նոտարական ակտի կոդ: 763-20170331-84-1119017), ղեկավարվելով ՀՀ կառավարության 14.05.2015թ. թիվ 588-Ն որոշմամբ, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնքի ղեկավարի 12 սեպտեմբերի 2024 թվականի «Վանաձորի քաղաքի Վարդանանց փողոց 86/64գ հասցեում գտնվող հողամասի վարձակալության պայմանագրի ժամկետը երկարաձգելու և նոր փոստային հասցե տրամադրելու մասին» թիվ 2130 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1.Որոշման 2-րդ կետում «երկարաձգելու» բառից հետո ավելացնել «և կողմերի փոփոխություն կատարելու» բառերը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ԱՐԿԱԴԻ ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ հունվարի 07
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 հունվարի 2025 թվականի N 06

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ ԳՅՈՒՂ ԳՈՒԳԱՐՔ 13-ՐԴ ՓՈՂՈՑ 14 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՄՈՎՍԵՍ ՇՈՒՐԻԿԻ ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԵՐԿՈՒ ԱՌԱՆՁԻՆ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐ ՏԱՐԱՆՋԱՏԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Մովսես Շուրիկի Մելիքսեթյանի 10.10.2024 թվականի թիվ 02/17035 դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 27092024-06-0004 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, «ԱՐՍԵՆ ՍԱՔԱՆՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ» ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագիծը, շինությունների բաժանման /միավորման/ սխեման, շինությունների բնութագիրը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով՝ **որոշում եմ.**

1.Տարանջատել Վանաձոր համայնք, գյուղ Գուգարք, 13-րդ փողոց, 14 հասցեում գտնվող, Մովսես Շուրիկի Մելիքսեթյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասը և դրա վրա գտնվող շինությունները՝ համաձայն «ԱՐՍԵՆ ՍԱՔԱՆՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ» ԱՁ-ի կողմից տրված թիվ 1 և թիվ 2 հատակագծերի:

2.Վանաձոր համայնք, գյուղ Գուգարք, 13-րդ փողոց, 14 հասցեում գտնվող տարանջատված գույքին տրամադրել փոստային հասցեներ.

ա. 0.038815հա մակերեսով հողամասին և նրա վրա գտնվող 284.89քմ բնակելի նշանակության շինություններին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, գյուղ Գուգարք,13-րդ փողոց, 14 բնակելի տուն:

բ. 0.039409հա մակերեսով հողամասին և նրա վրա գտնվող 343.71քմ բնակելի նշանակության շինություններին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, գյուղ Գուգարք,13-րդ փողոց, 14/1 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԱՐԿԱԴԻ ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ հունվարի 07
ք.Վանաձոր